Երաժշտության ընտրությամբ գործունեությունը 1-4-րդ դասարաններում

Նպատակը.

- ✓ սովորողների երաժշտական կրթում,
- ✓ նրանց մոտ երաժշտական մշակույթի ձևավորում:

Խնդիրները.

- ✓ երաժշտական լսողության, ունակությունների զարգացում,
- ✓ ինտոնացիոն մաքուր երգեցողություն,
- ✓ երաժշտական գրագիտություն,
- ✓ երաժշտարվեստի զարգացում (երգչախումբ և հարվածային պարզագույն գործիքների նվագախումբ),
- ✓ ստեղծագործական երևակայության զարգացում (փոքր մեղեդիների, ռիթմիկ պատկերների ստեղծում),
- ✓ գեղագիտական ճաշակի ձևավորում,
- ✓ երաժշտություն ունկնդրելու կուլտուրայի ձևավորում:

Գործունեության ձևերը

- ✓ *Երգեցողություն* (անհատական, խմբային՝ վոկալ խումբ, երգչախումբ)
- ինտոնացիոն մաքուր երգեցողության մշակում,
- երաժշտական ունակությունների՝ լսողության զարգացում,
- երգի կատարողական գրագիտության և կուլտուրայի մշակում,
- երգի կերպարային զգացողություն,
- ճիշտ շնչառություն, - ձայնի դրվածք,
- երաժշտական հիշողություն:

- ✓ *Երաժշտա-տեսական գիտելիքներ* (նոտագրագիտություն)
  Նոտագրագիտության ուսուցումը իրականացվում է 2-րդ, որոշ դեպքերում՝ 3-րդ դասարանից:

- 1/8, 1/4, 2/4 տևողության նոտաների, 1/4, 1/8 տևողության դադարի նշանների ուսուցում և կատարում,
- ինտոնացիա,
- տակտ,
- չափ,
- ձայնաշար,

- ուսուցանված երգերի և ունկնդրվող նյութերի նվագակցում ռիթմիկ պատկերներով («բնական», հարվածային և շրխկան նվագարաններ),
- հնչյունի բարձրության գրառում և կատարում,
- հնչյունի ուժգնությունը գրի առնելու նշաններ,
- դինամիկայի նշաններ,
- պարզագույն մեղեդիների գրառում:

✓ *Ունկնդրում.* հայ, ազգային, հոգևոր, դասական ընտրյալ երաժշտական ստեղծագործություններ

✓ *Նվագակցություն* «բնական», հարվածային և շրխկան նվագարաններով

✓ *Ռիթմիկ և երաժշտա-ռիթմիկ վարժություններ*

✓ *Ստեղծագործական աշխատանք.*

- պարզագույն մեղեդիների ստեղծում,
- ունկնդրվող նյութի ռիթմական պատկերների ստեղծման կարողություն,
- կատարվող երգի խաղային, պարային ներկայացման ստեղծման կարողություն,
- ունկնդրվող երաժշտությունը պար-մնջախաղ սկզբունքով բեմադրելու կարողություն:

Ուսումնական միջավայր

Երաժշտության ընտրության դասընթացը կազմակերպվում է առարկայի առանձնահատկություններին համապատասխանող, պահանջները բավարարող ուսումնական միջավայրում՝

✓ ուսումնական կաբինետ (տարածք),

✓ գրադարան,

Ուսումնական կաբինետը (տարածքը), որտեղ իրականացվում է երաժշտության ընտրության դասընթացը, պետք է հագեցած լինի հետևյալ միջոցներով.

ՏՀՏ միջոցներ

1. Համացանցին միացված համակարգիչ, որը կունենա համակարգչային այն բոլոր ծրագրերը, այդ թվում՝ նաև երաժշտական, որոնք հնարավորություն կտան իրագործել.

ա. երգի ուսուցում,

բ. ունկնդրում (համացանցից),

գ. երաժշտական գրագիտության ուսուցում,

դ. ձայնագրում,

ե. ձայնա-տեսասկավառակի ձայնագրում,
զ. ուսումնական նյութերի, ֆիլմերի ստեղծում:

2. Ուժեղացուցիչ , որը պետք է ապահովի մաքուր և համապատասխան ուժգնության հնչողություն

3. Էլեկտրոնային գրատախտակ
Smart-Notebook ծրագրով աշխատելու համար (հատկապես նոտագրագիտության ուսուցման և նվագարանները, նվագախումբը և երգչախումբը լիարժեք ճանաչելու նպատակով) նախընտրելի է ոչ թե պրոյեկտորը, այլ էլեկտրոնային գրատախտակը:

4. Դաշնամուր, պետք է լինի լարված, աշխատունակ (անթույլատրելի է լարվածքից ընկած, որոշ ստեղների անաշխատունակ վիճակը):

5. Շրխկան, հարվածային, երաժշտական նվագարաններ.
ա. նվագակցություն (ուսուցանված երգին, ունկնդրվող նյութին, բառախաղին),
բ. տևողության կատարում,
զ. նվագարանով աշխատելու ունակություն և հմտության ձեռք բերում:

6. Մասնագիտական գրականություն

7. Անհրաժեշտ գույք՝ աթոռներ և սեղաններ, պահարան՝ երաժշտական նվագարանների, մասնագիտական գրականության համար:

Համացանցը սովորողի կողմից օգտագործվում է ինչպես տեղեկատվական, ճանաչողական, այնպես էլ՝ ուսումնական տարածք:

Դասավանդողին անհրաժեշտ գործիքներ և նյութեր

Երաժշտության ընտրությամբ գործունեության դասընթացն արդյունավետ ու լիարժեք կազմակերպելու-իրականացնելու համար երաժշտության դասավանդողին անհրաժեշտ են հետևյալ գործիքները և նյութերը.

- ✓ դպրոցում՝ուսումնական կաբինետ (վերը նշված պայմաններով),
- ✓ անհատական համակարգիչ (նոթբուք/ նեթբուք)՝ անհրաժեշտ ծրագրերով,
- ✓ ձայնագրիչ (թվային, հեռախոս),
- ✓ ֆոտո-տեսախցիկ:

Սովորողին անհրաժեշտ գործիքներ և նյութեր.

- ✓ անհատական համակարգիչ (նոթբուք/ նեթբուք)՝ անհրաժեշտ ծրագրերով,

- ✓ ձայնագրիչ (թվային, հեռախոս),
- ✓ ֆոտո-տեսախցիկ:

Դասընթացը յուրացնելուց հետո սովորողը կարող է

- ✓ երգել մաքուր ինտոնացիայով,
- ✓ կատարել բազմաձայն ռիթմիկ վարժություններ, ստեղծագործություններ
- ✓ նոտագրագիտությունը ներկայացնել Smart-Notebook ծրագրով
- ✓ երաժշտական ստեղծագործություններն ինքնուրույն նվագակցել «բնական», հարվածային և շրխկան նվագարաններով՝ ստեղծելով տարբեր ռիթմիկ պատկերներ
- ✓ լսողությամբ իմանալ ունկնդրվող ստեղծագործությունը, հեղինակին
- ✓ գրի առնել՝ ա. ռիթմիկ պատկերներ, բ. պարզագույն մեղեդիներ
- ✓ ստեղծել փոքրիկ մեղեդիներ,
- ✓ լինել ուշադիր ունկնդիր: